

Ի դարգացումն ազգին յամենայնի . այսինքն 'ի հաւատո , յուսումն գիտութեան և յարուեստո . բարումբ են այնորիկ կարև սրաքոյնքն 'ի գործ , յո՞րոյ յուրապաւոյնքն են անգործադրելիք առժամս մեզ , զորս մարթէ 'ի տառն յայտոսիկ ամփոփեմք գլուխս :

Լրջորդ. խնդրոյն մեր պատասխանը այս պիտի ըլլայ: Արջալուսոյ ոգին և նպատակը աշխարհածա- նօթ է տառնմէկ տարիէ հետեւ որ անընդհատ կը հրատարակուի, այսինքն՝ Սէր, Սիւրբանու թի, և Ուսումնասիրութի բարոյէն ազգին ընդհան- րութեանը մէջ, և որովհետեւ Համազգեաց Րշն կերութեան նպատակն աւելայ է, ինչպէս կը տես- նուի անոր յայտարարութեանէն, հետեւեալը Ար- շալուսը չէր կրնար չպաշտպանել այս ազգօգուտ ընկերութիւնը: մանաւանդ թէ անոր իրաւունք- ները պաշտպանելու համար կը յորդորուէր Հոռ- մէական եկեղեցւոյ հպատակ ազգասէր մեծաւ- տիճան երեւելի անձինքներէ, պատկառելի և գիտնական վերապատուելի վարդապետներէ և ուսումնական ու ուսումնասէր՝ յարգելիներէ: որոնք գրեթէ ամէնը անդամ և ընկեր էին Հա- մազգեաց Րշնկերութեանը և գուցէ անդամ են մինչև ցայսօր: Նմանապէս ընկեր գրուած էին բուն Հայոց ազգին երեւելիներէն և ուսումնա- սէրներէն, և ուրիշ պատուաւոր անձինք: Արդ- թիթէ այս օրինակ միաբանասէր և Նստուածահա- ճոյ մեծարգոյ ընկերութիւն մը պաշտպանելը յան- ցանք մըն է Արջալուսոյ Արարարեան: Եւ այս լու- սաւորեալ դարուս մէջ կը գտնուին արդեօք այնպիսի անձինք, որ դատապարտեն մեր լրա- թուողթը, ինչու որ Սէր և Սիւրբանու թիւն և խղճմանաց ազատութի կը բարոյէտ համահայր և համամայր ազգի մը մէջ, որ տարաբարա- րար կրօնի պատճառաւ երկուքի բաժանուի: Որ ընթացքը դատապարտելի և ճշմարիտ քրիս- տոնէութեան դէմ է, Սիւրբանու թիւն և Սէր բարոյէն, թէ ատելութիւն և երկպառակութիւն ազգին լրութեանը մէջ մշտապէս պահելու միջոց- ներ ի գործ դնելը: Թող Հոռմէական լրա- տրութեալ Հայերը, մեր համազգի պատուական և արդարասէր եղբարքը, որոնք մտերմաբար կը սիրէ Քրջալուսը, ու ինքն ալ անոնցմէ եղբայրաբար կը սիրուի, թող կըսենք անոնք վճռեն, (մեր անոնց դատաստանը սիրով կընդունինք) թէ արդեօք մեր լրաթուողթը դատապարտելի է Համազգեաց Րշնկերութիւնը կամ լրա ևս է ըսել ճշմարտու- թիւնը պաշտպանելուն համար, թէ դատապար- տելի պիտի ըլլար թէ լրա կենար և անտարբեր աչօք նայէր այսպիսի ազգապիրական ընկերութե մը դէմ հզաժ թշնամական գործքերուն:

Տեղադրելի հեղինակին ծանր երեւնալով՝ Արջա- լուսոյ 377-երորդ թիւը թիւն մէջ հրատարակուած նամակը, կերկրայի որ Հոռմէական Հայէ մը գրուած չէ: Թէպէտ ևս չէ մը կրնար, մեր հակա- ռակորդին տարակոյսը լուծելու համար, նոյն նամակը գրողին անունը յայտնել: քանզի խօսք

տուած է մը ծածուկ պահէլ զայն, սակայն կրնամք ուրիշ կերպիւ տեսարակին հեղինակին միտքը հանգ- չեցնել: կրնամք ցուցունել իրեն կամ թէ կուզէ հրատարակել ուրիշ երկար նամակ մը: Հոռմէա- կան պատուաւոր և ուսումնական Հայէ մը սոտ- րադրեալ, որ ինքրած էր ի լոյս ընծայել Արջա- լուսոյ մէջ՝ իւր յայտնի ստորագրութեք: Նայց այս նամակը աւելի խիստ երեւնալով մեզ քան զվերոյիշեալ գրութիւն, չուզէինք հրատարակել: Ի վերջոյ հարկաւ որ կը համարվիմք նշանակել այս տեղը Համազգեաց Րշնկերութեան մէկ գլխաւոր յանցանքը ըստ սխալեալ դատողութե Հասուն- եան կուսակցութե: յանցանք քրեական. որուն համար անշուշտ դատապարտուեցաւ, ինչպէս կը տեսնուի վերոյիշեալ տեսարակին մէջ գրուած- ներէն: այսինքն՝ Հոռմէական Հայ Արջալուս- գիւ ալ նոյն ընկերութեան անդամ և ընկեր գրուած էն, և ընկերութեան իւր նախկին կանոնացը համապ- պիտի ընդունելը զանոնք: Այս կանոնը կը դատապարտուի նաև Հոռմի Հոռատոյ Տարածման ժողովքէն 1850 մայիսի 28ին գրուած թղթին մէջ. ուր յայտնապէս վճռուած է թէ, Ղըմարաթեան և Սիւրբանու մէջ Թիւրքանութեան լիւրար ըլլալը: այսինքն՝ Հոռմէական Հայոց և բուն Հայոց մէջ պէտք չէ որ միաբանութիւն ըլլայ, Եւ նշանակու թեան արժանի է, որ այս վճիռը կը տրուի աշխարհական ուսումնասիրական ընկերութեան մը համար, բանզի Համազգեաց Րշնկերութիւնը, ինչպէս յայտնի է ամենուր, կրօնական միաբանութիւն մը չէ: Խիստ երկար պիտի ըլլար մեր յօդուածը եթէ այս վճռոյն բնական հետեւութիւնները, որոնք անգործարարելի են, միջոցաւ յառաջ բերելու զգէինք: օրինակի համար՝ Հոռմէական Հայը առեւտրական ընկերութիւն և միաբանութե մը պիտի չկրնայ ընել Հայաստանեայց եկե- ղեցւոյ ուրիշ եղօղ Հայս մը հետ, և այլն, և այլն:

Հոռակ յիտոյ կուզեմք մեր ճշմարտաւ հակա- ռակորդին յիշեցնել, որ խիստ պարզմտութե փորձ կը փորձէ փոխանել զԱրջալուսը, թէ վտան- գաւոր է Հոռմայր առաջնական սորի Րշնկեր- գին հոգեւոր հոգի և առաջնորդ իւրեան անձի մը դէմ խօսել, կուզեմք յիշեցնել կըսեմք, թէ որ- չափ ժամանակ որ Հոռմեան արքեպիսկոպոսը իւր փոքրածիւ ժողովուրդեան մէջ այնպիսի թղթեր տպագրութեամբ կը տարածէ, որոց մէջ գրեթէ 4 միլիոնէ բաղկացեալ ուղղադաւան Հայ ազգը՝ իւր համազգի եղբարքը, ընդգէմ խղճմտանաց, սուտ դաւանութեան հետեւող լինէ, որով և կը թշնամանէ և յոգի լընթաւորէ զԱրջալուսը, (մեր ճշմար- ասէր հակառակորդին մեզ ուղղած խօսքն է զոր իրեն կը վերադարձնեմք): երբոր կըսեմք այսպիսի

ընթացք մը կուենայ, մեծ ու անյաղթելի դէնք մը տուած կըլլայ Արարարեան Արջալուսոյ ձեռքը և անոր գրածները և գրելիքները լիովն և ըստ ա- մենայն մասին կարգարարքնէ:

Այս օրինակ զենքով մը և ճշմարտութիւն միշտ իրեն պաշտպան ունենալով՝ Արջալուսը ամենին ին- երկիւղ մը չունի: Հասունեան արքեպիսկոպոսին ընթացքը պիտարակելու, մանաւանդ որ լրագիր- նիս այս գէպքին մէջ հատարակու թեան կարծեաց (օրինիօն բիւպլիք) հաւատարիմ թարգման և ար- ձագանդը եղած է:



Սեծ տրամութեամբ և ցաւագին սրտի- կը պարտաւորեմք խիստ տխրալի գոյժ մը տալ հասարակութեանը: Ի եզրապուրկէն կը գրենք թէ օգոստոսիստ Սիւսաց լայսեր սենեկա- պետ և տէրութեան խորհրդական պայծառա- փայլ Նիկիազարեանց Խաչատուր աղային մէկ հատիկ արու որդին՝ ծաղկահասակ Յօհաննէս աղան անցեալ տարւոյն նոյեմբերի 28ին յան- կարծահաս մահուամբ առ Վստուած փոխե- լէ: 7-8 ժամ հիւանդութենէ ետեւ:

Այս անակունեւի կանխահաս մահը ոչ մի- այն յիշեալ մեծահասակ ազգասէր գերազա- տանը սեւ սուգի և անմխիթար տրամութեան մէջ ձգեց, այլև բոլոր Հայոց ազգը: քանզի հանգուցեալ բաջատոհմիկ Յօհաննէս աղան, որ ինը տարեկան էր, Նիկիազարեանց իշխանա- զուն գերդաստանին միակ ժառանգն էր: ուստի այս մեծանուն և առատոնիամ ազգա- տոհմը գրեթէ պիտի վերջանայ՝ արու զաւակ- մը չունենալուն համար: այնպիսի պարտաւոր- մը, որուն չնախարհիկ բարեբարութիւնները ի վաղուց անտի կը վայելէ միշտ բոլոր հայկազուն ժողովուրդը: Այս մեր ըսածներուն անբար- բառ վրայ կրնայ համարուիլ Սոսկուայի Նիկիա- զարեանց մեծահասակ հոյակապ ձեմարանը: ուր բաղմամբ հայադրի մանկունք՝ վեհանձն հիմնադրաց ծախիւքը կը կրթութիւն զանազան օգտակար ուսմամբ և գիտութեամբ:

- Ա. Սիւրբանու, միակամ, խաղաղասէր շաղկա- պում անձանց ի մի միաբանութիւն:
- Բ. Զօրինուած և թարգմանութիւն գրեանց օգտակարաց, և հրատարակում այնոցիկ տպագ- րութեամբ:
- Գ. Կանգնում մի փորձարանաց և դպրոցաց ի քաղաքո և ի գիւղո՝ ի դատարարակութիւն ուս- տերաց և գտերաց:
- Դ. Հմուտ թիւն և գործադրութիւն արուես- տին երկրագործութեան:
- Ե. Հետախոյզ քննութիւն հայրենականացն հնութեանց և սովորութեանց:
- Զ. Հաւարում մատենից նախնեաց և գրա- մոց և այլոց նշարաց հնութեանց:
- Է. Հաւարում նիւթոց բնական պատմութե կենդանեաց, բուսականաց և ընդերկրեայց:
- Ը. Ուսումն ամենազգի արուեստից ծաղիկ- լոցն ազանց:
- Թ. Բարգաւաճումն վաճառականութե ըստ Եւրոպական օրինի:
- Ժ. Ուսումն անթերի գիտութե վաստակելոյ ի մետաղ:
- Յամենեցունց յայտնէ կարեւորացն ի գար- գացումն ազգի, ընտրեալ մեր գիւրադոյնսն ի գործադրութիւն, մատիցութ ի վաստակել զա- ռաջինս յայնոսիկ:
- Ի մի սէր գործեալ ընկերութեան. և զօրացեալ տրովք անդամակցացն, գործ է մեր առաջին թարգմանել և կամ շարադրել՝ զհատուածս կա-

- րեորս ի գործացում մն մտաց: Նիկիորդ՝ սկսանել մեծաւ ջանիւ արկանել հիմն հաստատուն վաճա- ռականութեան: Նիկիորդ՝ լինել զհետ պատ- րաստութե կանգնելոյ վարժարանս ուստերաց և դատերաց:
- Յետ զայս ամենայն մեծանկոյ ի կարգ, սկիզբն առնեմք ըստ ժամանակին միւսը ձեռն և այլոց վաստակոց: Եւ այսպէս ըստ առաւելու կարող- լութեան մերոյ, առաւել ևս ի մեծամեծս մխիթը ի գործս:
- Վրջ որպէս ցուցեալ է ի փորձոյ, նաև ի գործ իմն նուաւստ՝ եթէ չգուցէ կանոն հաստատուն, այն յաջողէ իոկ ոչ: Այս ևս առաւել ընկերու- թիւն իմն այսգիսի, որ ըստ կարգի և ըստ ժամա- նակին հանդերձեալէ արկանել բուն զմեծամե- ծաց, զայնցանէ՝ որ առժամս ի վեր քան զկարն է. և դարձեալ զի ոչ ամենայն որ առ ամենայն ինչ է ձեռնհաս: Այսինքն սահմանին կանոնք ա- մենայն գործոց այսորիկ ընկերութե՝ անփոփոխ: յորս պարտիմք յաւելուլ ըստ պէտս հետզհետէ և զայլ՝ հաւանութեամբ ժողովոյս:
- Արդ ժողովին յայս ընկերութիւն համազգեաց կրկին ազգ անդամակցաց՝ անուանեալք Վոր- ծօնք և Օժանդակք:
- Վործօնքն բոց ի հասարակաց պարտուց ընկե- րութե՝ հատուցանելոյ չափով իմն դրամս, զայլ իմն վերկորդը պարտս յանձին ունին ի գրեւ և ի շարադրել, նաև յայլ վաստակս ընկերութեանն պարապել, առանց սրահանջելոյ զհատուցումն

- փոխարեն վաստակոցն, սկսն կալեալ ընդունել զայն յԱստուծոյ:
- Օժանդակացն է գործ՝ տալ ձեռն ընկերու- թեան գրամովք և խորհրդովք, ըստ կանոնացն սահմանելոց ընկերութեան:
- Յնկերութիւն որ մտանէ՝ հատուցմամբ գան- ձուն հասարակաց դահեկանս տասն ի մուտսն, յանձն առեալ հատուցանելու դահեկանս հինգ ամիս յամոյ, Հատուցումն այս կոչի Բաժին:
- Վրջ յանձն է ի կամս իւրաքանչիւր՝ գրիւ որ- չափ և կամիցի թուով բաժինս: Եւ քանզի անկ է մեծատանց տալ ձեռն ըստ չափոյ մեծութեան իւրեանց առաւելութեամբ՝ ազգասէր յայմ ընկե- րութեան, վասնորոյ սահմանին վասն նոցա երկու- աստիճանք տրոց. այլ և միանգամայն, որպէս ու- սուցանեն օրէնք քաղաքականութեան, առաւել- լութիւն իմն պատուոյ այսպիսի: Սեծատունք՝ որք առնուցուն յանձնը հատուցումն առ սովաւն տասն բաժնի, ի լինել հետսքնական ինդրոյ ի միք ի ժողովին, առաքի առ նոսա տոմարի հրաւի- րանաց ի նախընթաց օր գումարման, առնելով յայտ ի նմին զպատճառս գումարման:
- Իսկ որք յօժարեցին առնուլ յանձն զհատու- ցումն առ սակաւն քսան բաժնի, ընկերութիւնն թէպէտ առաքէ և առ սոսա գոտոսական ի կա- րեւոր ինչ առուրս ժողովոյն, սակայն եթէ նոքս ոչ պարտապէսցին, կամ թէ ոչ կամիցին գաւլ, յերկրորդում առաւել ընկերութիւնն առ- սոսա թուով յայտարար, ծանուցանելով այնր

խուժեանք և ազգային խորհրդանշանն ընթացքին վրայոք : Դա՛նալ քէ Տէրա լրագիրը կը գտնուի տէ պատգամաւորաց ժողովոյն թնամական ընթացքը , որ ունեցաւ կառավարութեան դէմ :

ԱՄՆԱՏԵՆԻԱ . Դուրիս , 14-26 Յունվարի . Պաշտօնից ժողովը կը բարունակէ միշտ ի գործ դնել զանազան բարեկարգութիւններ , որ օրէնսդրութեան և ուրիշ ներքին կառավարութեան կրփրաբերին : Տը լա Դուր ծերունի ատենակալ իշխանին երկար ատենամասութիւնը ի պաշտպանութիւն պապական կարծեցեալ իրաւանց՝ ամենին ազդեցութիւն մը չըրաւ : քանզի կը բարկան կուսակցութեան պաշտպան և գլուխ ըլլալը յայտնի է ամենուին , ինչպէս մօտիւ տը Սոնթալամպէր նոյն պաշտօնը կը վարէ Կաղղիոյ խորհրդանշանն մէջ : Թէպէտև շատերը կը տարակուսին անոնց բարեպաշտութեանը և իրենց զորեցածին մտերմութեանը վրայ : Որպէս և իցէ Ինէմնոգէի ազգային ժողովը կը յառաջանայ միշտ սահմանադրական ազդեցութեամբ կարգադրութեանց մէջ : քիչ ժամանակին պիտի սկսի բազմաթիւ ամենակրթութեան (մարիաժ սիվիլ) օրինաց վիճաբանութիւնը :

Նամանակէս ծերակուտին խորհրդոյն մէջ օրինաց առաջարկութիւն մը պիտի ըլլայ Սարտենիա կղզոյն մէջ տնտեսանորդ ըսուած տուրքին ջնջուելուն վերայ , զոր եկեղեցականները կառնուն գիւղացիներէն : Խորհրդանշանն փաքազոյն մասը կը պնդէ թէ առանց Պապին հաճութեանը այս տուրքը չկրնալ ջնջուիլ : Բայց կառավարութիւնը վստահ և ապահովէ թէ իւր առաջարկութիւնը պիտի ընդունուի մեծազոյն մասէն , ինչպէս Սիգարտեան օրէնքը ընդունուեցաւ և ի գործ դրուեցաւ : Եւ ազդեցութեամբ օրինաց յիշատակը անմահացանալու համար հոյակապ արձան մը պիտի կանգնուի : Եւ քրուն համար յանձնարարական մասնաւոր ժողով մը կազմուեցաւ այս օրերս , որպէսզի այս արձանին վերաբերեալ հարկաւոր միջոցները որոշէ :

ԱՄՍՏՐԻԱ . Վէննա , 16-28 Յունվարի . Սասնական փոփոխութիւն մը եղաւ պաշտօնէից ժողովոյն մէջ : Լրագրութեան պաշտօնեայ պարոն տը Հմերկինը իւր պաշտօնէն հրաժարեցաւ : Որուն յաջորդեց պարոն Գրաւստպետը , որ եկամտից պաշտօնէին եղայրն է : Եւրոպայի բազմաթիւ արձանագրութեանց մէջ խիստ քիչ օրինակ ունիմք , որ երկու եղբայրք միևնոյն պաշտօնէից ժողովոյն անդամ ըլլան :

Հունգարիայի լուրերը ցաւալի են , կըսէ Օսթրիաի թրիտիքս , քանզի աւազակները գունդ գունդ կը պտտուին յիշեալ երկրին ամեն կողմը և մեծ եղեռնագործութիւններ կընեն :

Ստեքոս Հունգարիայի մէջ հղած աջաւոր համարոյն համաձայն , այս երկրին ժողովրդեան թիւը 8 միլիոն 14-485 հոգիի կը հասնի :

Լեւոնիոյ կառավարութիւնը հրաման տուաւ անցեալները , որ Պուտա-Լէշտի հրեայ գերձակները կարող ըլլան այսուհետեւ քրիստոնեայ բանւոր առնել թովերնին : Յայտնի է որ մինչև ցայսօր արգելեալ էր անոնց՝ այս բանը :

Տրեզորայի խորհուրդը կը բարունակուի : ուր գլխաւոր խնդիրները արգէն որոշուած են : Լեւոնիոյ պաշտօնէից ժողովոյն նախագահ Հմարցեանի իշխանը և իրաւաբան պաշտօնէից ժողովոյն նախագահ պարոն տը Սանթալամպէր փետրը վարի շին ըսաւ նոր տու մարի պիտի վերադառնան ի Տրեզորա :

ՕՒՆԱՔԱՆ ԵՐԱՌԵՍԵԱԼ

Կայսերական գործակալ մեծաշուք Լի Նէհատ էֆէնդին որուն վրայօք մեր նախընթաց թերթին կոստանդնուպոլսոյ յօդուածոյն մէջ յիշատակութիւն եղած է , երկու շաբթի օրը աւստրիական շրջենաւոր հասաւ Իզմիր , և այս օրերս պիտի սկսի իւր պաշտօնը ի գործ դնել :

Իսթաթուրքի յրան ընդհանուր հիւպատոս որ ի Սոնտոն մեծաբոգոյ պարոն Կառաւարդ Օրհը ըսաւ որ քանի մը ամիսէ ի վեր կոստանդնուպոլսոյ կը գտնուէր , անցեալ ամիս 11ին անգղիական շոգենաւոր հասաւ Իզմիր իւր ընտանեօրը , և

միւս օրը մեկնեցաւ իւր պաշտօնին երթալու :

Նահանգիս ամեն կողմի տեղակալները (գալմապամ) ըստ ազգարարութեան ընդհանուր կուսակալ բարձրագոյնը : Հալիլ փաշային արգէն ժողովուած են Իզմիր տնտեսանորդաց (էօջիւր) վերաբերեալ թագաւորական հրովարտակը լսելու :

Պէրութի բարեխաւութեան և քննութեան ժողովոյն նախագահ վսեմափայլ Սմին էֆէնդին որ յիշեալ քաղաքէն գալով Իզմիր մնաց քանի մը շաբթի անձնական տիրարութեան պատճառաւ , իւր առողջութիւնը ստանալով՝ անցեալ ամիս 26ին մեկնեցաւ կոստանդնուպոլսոյ երթալու :

Սոսամէն հասած վերջի լուրերը կը ցանուցանեն թէ , կայսերական զօրքը յիշեալ կղզին հասնելուն պէս , Վաթի և Սիէֆանտուրի գիւղաքաղաքաց բնակիչները փութացան իրենց կատարեալ հնարանդութիւնը յայտնելու , և միւս գիւղերն ալ այս բարի օրինակին հետեւելու վրայ են : Սոստի կերակրութեամբ կատարուէն և առանց արեւահեղութեան պիտի վերջանայ այս գործը :

Տփլիսի Լրագրաւոր քաղաքին հինգերորդ թիւը՝ այսինքն սեպտեմբերի 30ին թերթը ընդունելով այսինքն ծանուցած է մը : Յետ այնորիկ Լրագրաւոր միւս թերթերը չհասան Իզմիր , ուսկից կը մակաբերէ մը թէ ի կոստանդնուպոլսոյ ևս հասած չեն :

Հետեւեալ նամակը երէկ Պրուսպէն ընկալաք :

«Լրագրի հրատարակիչ ,

«Ներկայ ըլլալով թէ ազգասիրաց սրտին մեծ ուրախութիւն պիտի ըլլայ , կը փութամ Պրուսպի բարեհաջակ դպրոցին յառաջագիտութիւնը ծանուցանել ձեզ , որ օրստօրէ կը շարունակուի նոյն քաղաքին բարեկարգ Լրագրոյ գերապատիւ Վեորգ արքայական արքեպիսկոպոսին ազդ տիրական ջանքերը : Եւս դպրոցին մէջ օտար լեզուաց դաստեղծութիւնը կը շարունակուի և ամեն կիրակի զինի արձակման սուրբ եկեղեցւոյ մասնաւոր քնննութիւն կը ըլլայ՝ իւրաքանչիւր լեզուաց դաստեղծները կարգաւ ամենքը մէյմէկ կիրակի իրենց շաբթական դասուցը վրայօք հարց պատասխանի ընելով : Եւ կիրակի ալ որ էր յունվարի 14 , կարգը Տաճկերէնին ըլլալով , մենք ևս բարեբաղդաբար ներկայ գտնուեցանք , և աշակերտները , որոնք գեւաւոր սկսած էին այս լեզուին դաստեղծութիւնը , մեծապէս գոհ ըլլին զհանգիսականները իրենց արձանաւոր պատասխանատուութիւնը : «Պրուսպիք բարեկարգ քաղաքի վիճակեալ , մտերմ երախտագիտութեամբ շարահալկալը ինչպէս իրենց բարեխաւութեամբ Լրագրոյն հայրական ինտամըր՝ որ ազգասիրական փութով դպրատունը կատարեալ բարեկարգութեան հասցուցած է հմուտ և քաջաւոր՝ դաստեղծներ գտնելով՝ Հայկաբանութեան , Թուարանութեան և աշխարհագրութեան , Կաղղիայի և Յունարէնի : Եւս այս օրերս ընելով թէ՛ Սիւնի գործակալաց մէջ երեւելի գրագիր (քեաթիպ) մը կայ , յատկապէս խնդիր ըրած է ազնուայարգ Պարոնեան Սարգիս աղային , (որ պերճապատիւ Նէղայրիւնն աղգախնամ Սկրտիչ ամիրային կողմէն Սիւնի գործոց վերակացու կարգեալ է) և նա ևս Սորին Սրբազնութեան խնդրանացը համամատ հաճեթ նշան գրագիրը խրկելու , որ ամեն օր երէք ժամ դպրատուն կերթայ և ձրիապէս դաս կուտայ : Եւս ազգասիրական բարեբարութիւնը անշուշտ վսեմափայլ Նէղայրիւնն Վիրային կը վերաբերի , որ բաց յայտնակ բարեհաճեալ է մարդ սիրտ բար առատ եկամուտ մը կապել այս դպրոցին : որուն արկղապար մամէն ամիս կընդունի զայն :

«Ինչպէս , արգիւ հրատարակիչ , այս յօդուածը հրատարակէք , ոչ թէ միայն Պրուսպոյ դպրոցին բարեկարգութիւնը ծանուցանելու համար , այլ ամեն քաղաքի ուսանողաց քաջալերութիւն մը տալու և ազգասէր բարեբարաց բարեբարութիւնները պատկերու համար :

«Նամ՝ բարօրութեան ձերում ցանկացող :

«Պրուսա , ի 15 Յունվարի 1851 :

«Յ . Պապանիս» :

Ի լրագրոյն նախընթաց թերթին չորրորդ երեսը առաջին էջին մէջ՝ սխալմամբ գրուած է , 20 հաղար Իսպաղի գործով , փոխանակ ըսելու 20 հաղար Լեւոնիոյ գործով :

— Կաղղիական շոգենաւոր որ երկուշաբթի օր կըստատուէր Սարտիկայէն , նամանակէս Լեւոնիական շոգենաւոր որ երէկ թրքաւորէն կըստատուէր մինչև այս ժամս որ կէսօրին ժամ մը կուգէ : առկաւին չհասան , և այս յոսպաղութեանը պատճառաւ՝ Լեւոնիական շոգենաւոր լուրեր չունիմք մեր ընթերցողացը համարը :

ՕՒՆԱՔԱՆ ԵՐԱՌԵՍԵԱԼ

Չփառնիս , 2 Փետրվար :

Նաւատիկ գլխաւոր աղբիւրն ալ գինը . որոնք առհասարակ հանդարտութեան մէջ են : Իֆիսին գինը 96-97 զնչ իշու չէրին , և առայժմ՝ բաղաւթ մէջ գին թէ 400 կողով անվաճառ աֆիսն կը գտնուի : Լամպիւր 262-270 զնչի դժուարաւ վաճառ է : Տորոն չուգուիր և այսօրուան արժէքը 250-258 զնչ է : Սեղանմը ըստ տեսակին կը մատուի ի իւրութեամբ 885-925ի կենդինարք : Նէհրին 13 1/2-13 3/4 օխան դժուարաւ վաճառ է : Զէթին գինը 225-235 զնչ է կենդինարք : Հորանք 18-22 ըստ տեսակին կը վաճառուի : Փալամուտին գինը նոր փոփոխութիւն մը չեղաւ : Պենկալայի լեզակը կուգուի , այսօրուան արժէքը 110 զնչ է օխան : Բայց շատ կը յուսացուի թէ այս գինը պիտի բարձրնայ :

Ինչպէս գրաւորութեան :

Ինտոն 110 1/2 - 110 1/4 հինգ շոգենաւոր
Սարտիկա 179-180
Թրքաւոր

ՕՒՆԱՔԱՆ ԵՐԱՌԵՍԵԱԼ

ԹԱՆԿԱՐԱՆ ՎԵՐԱՆՈՒԹԵԱՆ

Ի Օ. Գրաւոր , ի Սիւնի օղլու խան :

Թանգարանին տեսուչը կը ցանուցանէ հասարակութեանը թէ յանձնառու կը ըլլայ տարողութեամբ անվաճառ օրագրաց Լրագրոյ , Կաղղիոյ , Պէրթիայի , Իստանբուլի և ուրիշ ազգաց : Այս գրատետը մէջ ծախու կը գտնուի ընտիր գիրքեր , ազգի ազգի գրատետներ , աշխատութիւններ , ամենակարգ գրականութիւններ , գիրք և ուրիշ տեսակ թղթեր , աւաղ , կրօնագիր , նամակ փակեալ , նամակներ (փուլ) , մատիս (գործընդգայիմ) , և այլն :

Գլխաւոր գրաւաճառաց և երաժշտութեան (մուշիկայի) հրատարակիչներուն հետ ուղղակի հարաբերակցութիւն ունենալով , յիշեալ թանգարանին տեսուչը յանձն կառնու բերել տալու Եւրոպայէն ամեն տեսակ գիրքեր և երաժշտական թղթեր : Իւր գլխաւոր թղթակցը՝ Փարիզի ամենին հին վաճառատուն մը փալատեալ ըլլալով , գիւրթութեամբ կընայ բերել տալ այս մարտաքաղաքէն նաև ուրիշ տեսակ բանք , ինչ որ կուգն :

Օրագրաց տարողութեան համար յատուկ գործակալ մը կայ , որ խմբագրուած հետ ունեցած իւր սովորական յարաբերութեամբ կարող է ուրիշներէն խիստ աւելի կանոնաւոր կերպով ի գործ դնել այս ծառայութիւնը : Թանգարանին տեսուչը պիտի կարգադրութիւններ հաստատուէ , որ դպրոցի մը տարողութիւն կամ մէկ գիրք բերել ալ օգտը միայն այնպիսի գրագիր պիտի վճարէ , որքան որ հաստատուելու էր թէ ինքը գրած է բերել տալու կամ ծախու առաւ ըլլալը զայն : Հասարակութեան իւր խնդրած բանին միայն մարտ արժէքը ու փոխարկութեան ծախքը պիտի վճարէ : Իրաւունք հաճից (քովիսին) պիտի չառնուի : Թանգարանին տեսուչը կը կոստանայ ի գործ դնել իրեն առջուած ամեն յանձնարարութիւնները՝ հաւասարութեամբ , չքատութեամբ և ինչպէս թեմէ ի ծախս :

Վերանորոգեալ Թանգարանին գրաքին միջոցաւ կը ծախու ուրիշ շտեմարանի մը մէջ , որ նամանակէս Սիւնի օղլու խան է : Կաղղիոյ պատուական գինի՝ թէ՛ տակաւու թէ՛ քանի մը օխան Գրաւորին հին օղլ , ափսոսելի և անխաղաղ օղլ և ուրիշ ըստ նախնի խնդիրներ , նամանակէս զանազան տեսակ աղած մի :

ՊԱՏՈՒԱԿԱՆ ՀԵՂՈՒԿ

Վրայի ցաւի համար , զոր հնարեց հոյակապ Իերմանացի քիմիագործ Ե. Հոֆմանը :

Պարոն Հ. Պէրը , որուն խոնոթը ֆրանկաց լառն է , իշխանայ ծանոցանել հասարակութեանը , թէ ինչպէս միայն ընդհանուր աստիճանաւ է , բոլոր Լեւոնիական , այս օգտակար կը ըլլան : որ գրելի վայրէջանի մը մէջ ամենէն աստիճանային ցաւը իշխանային է , և մարտունակութեանը վնասակար նիւթ մը ամենէն լայնարձակներ :

Հրատարակիչ և տէր Լրագրոյ :

Պալատ Գ . Պալատալարան :

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐԵՎԱԼՈՒՍՈՑ ԱՐԱՐԱՏԵԱՆ